ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 01, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 96-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2016 թվականի փետրվարի 4-ի << Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N 11-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

<<Երվանդ Հակոբյան>> բառերը փոխարինել <<Արա Սիմոնյան>> բառերով:

<<Կարեն Հունանյան>> բառերը փոխարինել <<Արմեն Վարդանյան>> բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 18 թ. սեպտեմբերի 13
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 97-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 50-Ն որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 50-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումները՝

1) 09.1.1.51 /նախադպրոցական կրթություն/ ծրագրի 4511/ սուբսիդիա / հոդվածի <<16050,0>> թիվը փոխարինել <<15313,0>> թվով:

2) 09.1.1.51 /նախադպրոցական կրթություն / ծրագրի 4655 / կապիտալ դրամաշնորհ ՊՈԱԿ-ներին/ հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<737,0>> թվով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. սեպտեմբերի 14
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018 թվականի N 98 Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերի և 18-րդ կետի գ) ենթակետի, հիմք ընդունելով Գեղամ Վասպուրականի Զոհրաբյանի կողմից 2018 թվականի սեպտեմբերի 13-ի Լեռնանիստ համայնքի ղեկավարին ներկայացված դիմումը, և այն հանգամանքը, որ դիմումի առարկա ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, նաև դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն ներկայացնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 1-ին փողոց թիվ 101 հասցեում գտնվող Գեղամ Վասպուրականի Զոհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող 07-033-0225-0009 կադաստրային ծածկագրով 0.594 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ հողամասի վրա ինքնակամ կառուցված արտադրական նշանակության շինությունից օրինական ճանաչել ընդհանուր 176.77 քմ արտաքին մակերեսով մասը՝համաձայն ներկայացված դիմումի և կազմված հատակագծի :
2. Կառուցապատումն իրականացրած անձի՝ Գեղամ Վասպուրականի Զոհրաբյանի կողմից 60 օրյա ժամկետում օրինականացման ընդհանուր գումարը՝ 145 835.25/ մեկ հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր երեսունհինգ դրամ 25 լումա/ ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 18 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17
գ.Լեռնանիստ